



ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

(Տես երես 193):

Արդ հարկաւ մեր Շնորհալուոյն ուսմունքն և վարժքն եղան աւելի հոգեխառն գիտութիւնք քան արտաքինք, եկեղեցական քան քաղաքական. Աստուածաշունչ գրոց և Ս. Հարց վարդապետութիւն և մեկնութիւն, եկեղեցւոյ և սրբոց պատմութիւնք, կանոնաց և կարգաց հմտութիւն, չափ մը տօմարագիտութիւն և անոր նմանքն, երաժշտութիւն եկեղեցական, և վայելուչ շարագրութիւն արձակ և ոտանաւոր բանիւ: Ասոնց և այսպիսեաց մէջ ալ լաւ հմտանալ՝ բաւական գիտութիւն և իմաստութիւն էր. և ահա մեր Շնորհալին ոչ միայն յառաջացեալ այլ և գերազանցեալ կ'երևի ասոնցմով, ոչ միայն քան զժամանակակիցսն, այլ և քան զբազում նախնիս. և յայսմ է իր մեծ ձիրքն և մեծ շնորհքն, կամ մէկ մեծ պատճառն Շնորհալի ըլլալու և ըսուելու:

Այսպիսի շնորհք՝ լոկ աշակերտութեամբ կամ երկայնմտութեամբ չէր վաստակուեր. Ներսէս ասոնց վրայ ունէր բնական և կրթական սրամտութիւն կամ խորամտութիւն և ջանք. և ի վերոյ առնայն ի մեծ ամփոփումն մտաց և վերաբերութի մը՝ առ Աստուած. «ամենայն տուրք բարիք և պարգևք կատարեալք ի վերուստ են ինեալ առ ի

Հօրէն Լուսոյ » ըսուածը՝ գործով ալ խնդրելով: Իր գրուածքը քննութեամբ կարդացողն չի կրնար չհամոզուիլ այս բանիս և չզգալ երկնային օծում մը՝ Ներսիսի որ և է գրուածոց մէջ. որոց ամենէն նշանաւոր կերպարանքն և ոճն՝ այս իսկ օծեալ կամ շնորհազարդ ըլլալն է: — Իրեն հոգւոյն հաղորդն և թարգմանիչ Լամբրոնացին՝ այս պէս կը վկայէ, յետ յիշելու անոր քահանայանալէն ետեւ ըրած կրթութիւնը. (Թէ յԱստուծոյ

...« Փոխան պարգեւ հայցէ
ԶՍողոմոնին զմբտաւ ածէ.
Իմաստութիւն և Բան, ասէ,
Ի սուրբ Հոգւոյդ՝ ինձ ընձեռէ:
Հաշտ և համբոյրն (Աճ) ընդ այս հաճէր,
Զփափագ ըղձիցըն կատարէր.
Իմաստ բանի անչափ շնորհէր,
Խորոց քննող զնա յօրինէր »:

Ամենայն մասն կամ յատկութիւնք գիտութեան կամ վարժութեան զարգացեալ և վայելուչ էին ի Ներսէս. մաքրութիւն մտածման, ազնուութիւն բացատրութեան, յստակութիւն

լեզուի, վայելուծիւն խօսուածքի. որուն վկայեն իր վարքը գրողք: Նաև գեղեցկութիւն նիւթական ձևագրին. զի

« Որպէս հօրանս ուղուց ցուցաւ
Գեղեցկագիր գիրըն կարգաւ »,

կ'ըսէ Լամբրոնացին. այծից ձագերու նմանցընելով սեւագիր տողերը. զոր աւելի պարզէ արձակաբանն. « Գրէր և շաբաթագրութիւն գրոյ, հրաշա-
« տեսակ և վայելուչ 'ի զանազան խրատ, որպէս աս.
« տուածային մատամբ շարժահիւստաւ. և գիծք
« շնորհակիր և աստուածաներկ մատանցն, և
« բանք հոգեշարժք լեզուին՝ արտաբերեալք 'ի
« յոքնահանձար մտացն, օտար և գեր 'ի վերոյ ե-
« րեւին մարմնականաց գիտութեանց և իրաց:
« Քանզի ոչ ունէր 'ի մարդկանէ, և ոչ 'ի ձեռն մար-
« գոյ, այլ 'ի ձեռն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ.
« որոյ մաքրեալ և յարգարեալ էր զհոգի և զմար-
« մին և զմիտս, տաճար և բնակարան համազոյ
« Նորորդութեան »: Տպագրութիւն չեղած ատեն
'ի հարկէ պէտքն կը ստիպէր ձեռքը ընդօրինակել
գրքերը. բայց Շնորհալին և իր նմանքն՝ աւելի
գրոց իմաստները գիւրաւ իրենց միտքը տպաւորե-
լու համար՝ կ'օրինակէին. և ահա սա ինքն իր
յառաջացեալ կենաց ատենն ալ կ'օրինակէր նաև
շատ հեղ կարգացած Ս. Գիրքերը. ինչպէս յամին
1149 Սողոմոնի գիրքերը օրինակէն յայտնի է՝ ա-
նոնց վրայօք գրած ոտանաւոր յիշատակներէն:
Մենք չենք արժանաւորած այն Զորհալիւ և աս-
տուածաներկ մատանց նիւթական շարժագրու-
թիւնը տեսնելու և համբուրելու. այլ բանական
վայելագրութիւնը կամ շարագրութիւնը՝ ամե-
նայն հայագէտ կրնայ այսօր ալ կարգաւ և վկա-
յել, ինչ որ անոր վարքը գրող հին հեղինակն կ'ը-
սէր շատ յարմարապէս. « որպէս 'ի ճախարակի
« ճարտարաց քերթել անգէղ և անգծական բա-
« յիւք »: Այսինքն այնպէս յստակ, կոկ, ան-
խայթ, և անոյշ էին շարագրութիւնքն, որպէս
թէ ճախարակէ անցած յղկած կըրօած: « Ահ զի
« վայելուչք և զորկագոյնք էին ասացեալքն առ
« 'ի նմանէ, և Հոգւով սրբով լի, այնր աղագաւ
« յօժարապէս 'ի միտ տունուին զնոսա. զի իբրև
« աղիւ համեմեալք էին »:

Հարկ է մեզ իր թողած գրուածոց հետ՝ ժա-
մանակաւ մօտ եղողոց այսպիսի վկայութիւններն
ալ լսել, որպէս զի լու ճանչնանք մեր Ներսիսի
շնորհաց ճառագայթները կամ աղբիւրները. զոր
եթէ ուղենք ռամկաբար եղեմական չորս գետե-
րու նմանցընել, պէտք է չորս վտակ ճանչնալ՝ իր
հոգւոյն սրբութիւնը, մտաց նրբութիւնը, բա-
րուց ազնուականութիւնը և արտաքին մարմնա-
ւոր ձիւքերը. որք 'ի մի խառնեալ՝ յորդորեցին
գետ մը, որոյ մեծագոյն մասն արդ յանմահու-
թեան ծովը թափած կը վերստայ, փոքրիկ մաս
մ'ալ երկրաւոր յիշատակաց մէջ անմահանայ:
Ինչպէս որ հոգեմարտութեան հետ խառնած էր
ուսուցանասիրութիւնը, այսպէս անոր հետ ալ մըշ-
տատեւ եղաւ 'ի Ներսէս. կրնայ ըսուիլ թէ խօ-
սելու սկսած ատենէն սկսաւ և կարգաւ, քիչ ա-
տենէն և գրել, և այս մինչև 'ի վերջ կենացը ա-
ւելի քան զՅՈՒ աւարի լոկ գրելով. և այն նաև այն-
քան պաշտօնական հոգոց և զբաղմանց մէջ. որ

եթէ քիչ մ'ոգի աւնրու ժամանակ գտնէր՝ կար-
գաւով, գրելով և քննելով կը սպառէր զայն. զի

« Յիմաստից փորձ մըտեալ էր,
Միշտ ընթերցմանն պարապէր,
Ահ հայր խորին բանից լինէր »:

կ'ըսէ Լամբրոնացին: Իսկ եթէ քիչ մ'աւելի ընդ-
արձակ ատեն գտնէր, այսինքն նուազ հոգ և ըզ-
բաղանք 'ի կաթողիկոսարանի, իր եղբոր օգնա-
կանութեան տարիներուն, կը խնդրէր որ առանձ-
նանայ տեղ մը, և ազատօրէն պարապի գրելու և
կոկելու գրուածը, այն վերոյիշեալ ճարտար ճա-
խարակէն անցընելու, կամ ըստ Լամբրոնացւոյն՝
յունական ընտրաբանութեւն շարագրելու, վասն զի
եթէ Յունաց լեզուն չէր գիտեր, անոնց վայելա-
բանութեան շնորհքն ունէր. այսպէս կրնայ ի-
մացուիլ իր թոռին ըսածը.

« Հոռոմ զարուեստն 'ի դործ ածէր,
Ահ զանազան բանս արտագրէր »:

Այն կաթողիկոս եղբայրն զինքը կանուխկէկ
չպարտաւորէր իրեն օգնական ըլլալու՝ հայրապե-
տանոցին գործոց և հոգոց, Շնորհալին անշուշտ
այդ հոռոմ կամ ճոռոմ արուեստով և հայ պեր-
ճաբանութեամբ՝ շատ սքանչելի և համեղ գրուած-
ներ պիտի թողուր 'ի գանձ աղագային գարուծեան
և եկեղեցւոյն. որոց երաշխաւոր կրնան ըլլալ՝
մեզի հասածներն, զոր յետոյ պիտի թուեմք, և
որք ամենքն ալ վերոյիշեալ ձիւքերով կը փայլին,
որքան ալ շատերն հարկաւ մը և կարճ ժամանա-
կաւ շարագրուած ըլլան: Հարկ է որ բազմաթիւ
ալ եղած ըլլան գրուածքն. որովհետեւ ինչպէս
առաջ ալ տեսանք՝ շատ ագահ էր ժամանակի, և
երբ ուրիշ կարևոր գործ չուներնար, յետ աղ-
թից՝ կարգաւ և գրելն էր զբաղմունքն. և ուր որ
ըլլար՝ թուղթ և կաղամար պատրաստ կ'ունենար
հետը, որ մտօք յղացած պայծառ խորհուրդնե-
րէն գոնէ մաս մը գրով ալ ծնանի. ըսել է որ
միտքն անդադար հոգեւոր և բանական մտածու-
թեամբք զբաղեալ էր. կամ Ս. Գրոց խօսք մը
քննելով և մեկնութիւնը փնտրելով, կամ կա-
րևոր խնդրոյ մը պատասխան պատրաստելով,
կամ ոտանաւոր քերգուածոյ տողեր և չափեր
կաղմելով. որք մտաց կաղալարին մէջ ձևանալուն
պէս՝ մէկէն կ'ուղէր գրել, որ չմոռնայ, և միտքն
ուրիշ բան մը փնտռէ: Ասով կրնայ ըսուիլ թէ
որոշեալ ժամանակ մը չուներ բան շարագրելու,
այլ ինչպէս միշտ կը մտածէր, միշտ ալ կ'արտա-
գրէր. աւելին ալ կրնանք ըսել իրեն համար, որ
և իր զարմանալի յատկութեանց մէկ շնորհքն է,
թէ գիշեր ցորեկ չուներ, և հաւասար միտքն կը
բանէր և կ'աշխատէր յարթութեան և 'ի քուն:
Այսինքն, այս զարմանալի և չնիկ ձիւքն ունէր,
որ երբ երկայն ատեն գրոց վրայ աշխատելով կը
յոգնէր, և ալ անկարելի էր աչքը բանեցընել,
պիտանի մտածութեամբք ծանրացեալ զուլիւր
բաղմոցին վրայ գրած՝ քիչ մը կը հանգչեցընէր,
և կը մրափէր. բայց նոյն իսկ քունն հրաշալի արթ-

1 Բայց ուրիշ օրինակք ձեռագրաց ալ ճոռոմ արուեստ
կ'ըսեն, իրր պերճարան կամ ճարտասան:

նուութիւն մը կ'ըլլար. մտաց մէջ ժողոված անու-
շահոտ նիւթերն՝ հաւաքուելով ձուլելով կը ձեւ-
նային. կարծես թէ բանաւոր մեղուն կ'աշխատէր
այն թանկ ուղեղին քնքշաց մէջ. և աշխատութեան
նշանն անգամ կ'երևէր իր պարկեշտ շրթանց վը-
րայ, որք իրեն մէկու մը հետ խօսելով կը շար-
ժէին, ինչպէս շատ հեղ ստուգեցին ականատեսք.
և կարճ մրափէ մը վերջը՝ մէկէն սթափելով կ'եւ-
նէր, մտաւորական մեղրը մելանախառն աւանդե-
լու մագաղտութից վրայ: Դարձեալ միտքը կ'առ-
նուր խնդիր մը, կամ այլևայլ Հարց ըսածը Ս.
Գրոց մէկ խօսքին վրայ, և նորէն նոյնպէս կը
հանգչէր, կը մրափէր, և շուտով ելնելով՝ մտաց
մէջ ցրուած տարերքը՝ միացեալ և ձեւացեալ վա-
յելապէս՝ կ'արտագրէր: Արդեօք բնական վար-
ժութիւն մ'էր այս, թէ գերբնական տուրք մը,
նման Ս. Ոսկիբերանի վրայ պատմուածին. իբր
զի Պողոսի առաքելոյ թղթոց մէկնութիւնը գրած
ատեն՝ մտքն կը յափշտակուէր. արժանաւոր
անձ մ'ալ տեսաւ որ նոյն ատեն Պողոս առաքեալ
Ոսկիբերանի ակընթէն կ'ազգէր ինչ որ պէտք էր
գրել, և կը գրէր: Թէ ոչ Առաքեալ մը՝ անշուշտ
Առաքօղն առաքելոց կը թելագրէր և մեր արծաթ-
բերան հեղինակին, որոյ հետ խօսակցութիւնը
նշանակէ այն շրթանց շարժումն ալ. որ հեղական
ըսուած երկնաշնորհ գիտութեան կարծիք տուաւ
իրեն ժամանակին մօտ վարդապետաց. « Ուստի
« և ընկալաւ զնորոհս դիտութեան և Հոգւոյն
« Սրբոյ, կ'ըսէ Պատմիչն, ոչ ինչ ընդհատ յառա-
« քելական դասուցն՝ որ զՀոգւոյն արբին զբա-
« ժակն 'ի սուրբ վերնատանն: Մեկնէր զխորա-
« գոյն միտս բանի սուրբ գրոց, որով հրաշանա-
« յին ընդ քաջակորով իմաստութիւնն և ընդ
« պանչելի սուրբ և յստակ տեսութիւնն՝ դասը
« ընտրելոց վարդապետացն՝ որ զայնու ժամա-
« նակաւն էին »: — Այս զարմանալի և որոշո-
ղաբար իմն շարափրութեան մէկ առաւելութիւնն
ալ համարելու է անոր յստակութիւնը, այն աւ-
գեղ և անգծալիս ողորկութիւնը, որով Շնորհալին
մեր ընտրելաբոյն հայկաբանից առաջին կարգին
կը տեղաւորի, և ասով ալ իր դարուն պարագլուխ
կ'ըլլայ:

2.

Տաղաւապոսիւն հայկական. — Շնորհա-
լոյ քերդոյական ձարտարութիւնն. — Վիպա-
սանութիւն, առաջին գրութեան նորա. — Զանա-
զանութիւն ոմոյ, երկրոց, և այլն. — Բանա-
ստեղծական հանձար:

Եթէ մեր լեզուին արձակաբանից մէջ առաջին
կարգը կը դասուի Շնորհալին, տաղաւապից մէջ
առաջնց տարակուսի նոյն իսկ առաջին տեղին ու-
նի. և միակ այս բանս կըրնար անմահական պար-
ծանք ըլլալ. լեզուի մը և ազգի մը նախադաս չա-
փաբան, այսինքն ոտանաւոր բանիւ գրօղն ըլլալ:
Իրմէ աւելի ճարտասան և բանաստեղծ հեղինակ-
ներ ունի մեր դպրութիւնն, բայց ոչ զոք իրեն
հաւասար վայելաբան՝ միանգամայն յարձակ և
յոտանաւոր բանի, մանաւանդ այս եսքինիս մէջ.

որոյ արուեստին զանազանութեանն և ճարտա-
րութեանն հնարոյ և վարդապետ իսկ կըրնայ
ըսուիլ. վասն զի ոչ ոք իրմէ առաջ այնչափ տե-
սակ չափերով և ոճով երգեր, տաղեր և քեր-
գուածներ գրած է: Կըրնանք յիշաւի յայսմ մա-
սին ալ իր բաղմարդիւն մեծ պապը Գր. Մագի.
ստորոք՝ համարիլ նոր ճամբայ մը փորձող, ինչ-
պէս շատ բանի մեր դպրութեան մէջ և նորոգող
դպրութեանց, սակայն այն ճամբան ստուգիւ-
հարթող, ընդարձակող և պէսպէս բաժնող՝ դար-
ձեալ մեր Շնորհալին է: Մեր հին նախնեաց կամ
թարգմանչաց քերգուածները չունինք, կամ հա-
զիւ նշխարքներ. միայն Շարակնաց մէջ գտուին
ոտնաչափ գրուածք ալ, որոց եղանակին սղու-
թիւնն կամ երկարութիւնն երբեմն կ'անյայտա-
յընին չափական արուեստը. սակայն ինչ որ կը
ստուգուի անոնցմէ, և Յոհ. Մանգակունւոյ ընծա-
յուած ողբական գրուածքէ մը, այս է, որ մեր
հին տաղաւապութեան ձեւն՝ նման էր հնագոյն և
շատ լեզուաց մայր կարծեցեալ Հնդկաց սանս-
կրիտ հին լեզուին, որոց տողերուն նման մեր
տաղիցն ալ 16 ոտք կամ վանկ ունի, և չորս ան-
գամ կամ մասն կը բաժնի. փոխանակ բառից պա-
տահական շեշտին (զոր չունի հայերէն լեզուն) ա-
ռաջին և երրորդ անգամոց վերջի վանկերուն վը-
րայ ոյժ տալով, որպէս զի ներդաշնակութիւն
առնու քերգուածն. զոր օրինակ.

« Քրիստոսասէրք իմ սիրելիք, ինձ օգնեցէք վի-
րաւորիս,
Եւ գորովով մեծ ողորմիւ՝ աղաչեցէք ըզՏէր
վասն իմ՝ »:

Եթէ այս Թ և Դ անգամոց շեշտերն լաւ զգալի
ըլլան՝ շատ հոմաձայն և անորոշ կ'ըլլայ մեր տա-
ղաւապութիւնն. ևս առաւել, եթէ ըստ ոմանց,
ազատութի կարծելով անգամներն կարճատուին,
փոխանակ չորս վանկի ըստ կամա երկու երեք և
կամ մէկի իջնան, ամենեւին անարուեստ, խառ-
նակ և անհամ կ'ըլլայ չափաբանութիւնն, մանա-
ւանդ թէ և ոչ չափաբանութիւն. իսկ հաւասար
չորս անգամոց կամ մասանց հոմաձայնութիւնն
ալ այլայլելու համար՝ Նախնիք մեր միայն տողին
առաջին անգամը կը կարճատեն մէկ երկու վան-
կով, որովհետեւ խօսքին սկիզբն բնական կը սեպեն
աւելի ոյժ մը տալու. զոր օրինակ.

« Ընդհանուր քարոզեցին զբանդ կենաց ընդ տիե-
զերս,
Թօթափեալք ըզքուն մահու՝ զուարթնոց երկ-
նից հետեւեցան »:

Իսկ եթէ ուղեն աւելի ներդաշնակութիւն մը
առաջ կ'անոնապէս անգամոց մէկն չորս՝ մէկաւն ե-
րեք վանկով կ'ընեն. ինչպէս մեր առաջին Քերգո-
ղահայր կոչուած Մովսէս Թորենացին կ'երգէ.

« Ուրախացիր, Սըրբուհի, Գաբրիէլն աւետեօք,
Որ քարոզեացն ըզգալուսա՝ արբային Տեառն
ի յերկնից »:

1 Յովհան Մանգակ. երես 384 տպագրին:

Եթէ կարենան շեշտից ոյժը պատշաճեցնել աւելի կարճ բառերու՝ (մանաւանդ երգոց մէջ) այն ատեն լաւ գիտելով և միշտ սողերուն քառանդամութիւնը պահելով, պէսպէս կը զանազանեն զանոնք, ինչպէս կ'երևի Կոմիտասայ կաթողիկոսի Հռիփսիմեանց շարականին մէջ. յորում ¹ վանկէն ինչուան միավանկ անդամ կայ, և ² 14 վանկով տողէ ³ ինչուան 8 վանկով ⁴. բայց այսքան ազատութիւն՝ միայն ապին եղանակաւոր ըլլալուն համար է, որով երգողն կ'երկարէ կարճ մասերը, և փոխանակ շեշտի երկար կը բանեցնէ ⁵: Սակայն ի վերայ այս ամենայնի, մեր բնիկ հայկական տաղաչափութեան ձևն ամենէն առաջ ըսածնիս է, 16 ոտնեայ և քառանդամ, միայն առաջին անգամն կարճեցնելով երբեմն մէկ վանկով և երբեմն աւելի. իսկ եթէ աւելի տարբերութիւն մը գտուի, անսովոր զարաւղութիւն մ'է, թէ ոչ և գրչի սխալ. և այս կանոնով գրուած են մեծագոյն մասն աղագային քերդուածոց, սկսեալ վերոյիշեալ Մանդակունւոյն ողբէն՝ մինչև ի ԺԶ դարու քերդուածս ալ: Նոյն չափով ուղեր է գրել և ինքն Մագիստրոս իր հուշակեալ 1000 տողեան քերդուածը՝ Մէծ է գրծոյ Արքայ. յորում ուղեր է բովանդակել հին և նոր կտակարանաց պատմութիւնը, երեք օրուան մէջ տաղաչափելու գրաւ գնելով մահմետական Աբրահիմ ամիրայի մը, զոր և զարմացնելով քրիստոնէսայ ըրաւ. թէ և մեզի համար իր աշխարհաբան շատ պանծալի չէ. որովհետև անհարթ և անհամ տողեր և ձևեր ալ մտուցեր է, և բռնազբօս հոմաձայնութեամբն ալ տաղաչափ կ'ըլլայ:

Դառնալով առ Շնորհալին, սա գրեթէ այս նախնեաց տաղաչափութեան ձևը բոլորովին թողած է. որովհետև ինքն իր տաղից մեծ մասն եղանակաւ գրած է, ուստի եղանակին յարմարեցներ է տողերը. իսկ վիպասանական գրուածոց, որք հաւանորէն եղանակաւոր չէին, այնքան երկար տողեր (16 ոտնեան) յարմար չէ սեպեր, բարոյական սկզբամբ մը. որ է, տղայոց և համբակաց համար գրած ըլլալն, որոց աւելի դիւրին է կարճ տողերը միտք պահել: Իր հրատարակուած քերդուածոց մէջ, եթէ չեմ սխալիր, մէկ հատ մը միայն կայ այս հին հայկական չափով 16 ոտնեայ քառանդամ, և է Աւագ ուրբաթու տաղին Յորգորակն ¹: Միայն Վարդանանց շարականը հին հայկական ոճով գրած է, և այն գրեթէ միշտ առաջին անգամն եռավանկ ընելով:

Շնորհալույ տաղաչափութեան մէջ մուծած մեծ նորութիւն մ'ալ է նոյնաձայնութիւն վանկից կամ վերջայանգ ըսուածն. այս ալ կրնայ Գրիգ. Մագիստրոսի դիւտ ըսուիլ, Արաբացոց քերդութեան հետեւելով, ինչպէս կ'ըսէ ինքնին և կը պարծի, և այնպէս ալ գրած է իր հազարտողեանը. և ոչ միայն զոյգ մը տողից կամ տուն մը հոմաձայն կամ նոյնապանգ լըծելով, այլ և բոլոր քերդուածը մէկ ձայնով վերջացնելով, Ի, Ի, Ի:

որուն Շնորհալին ալ հետեւած է և ուրիշներն ալ յետոյ. այս ձայնս (Ի) աւելի բնական և դիւրին գտնելով, թէ բայից և թէ բառից հոլովմամբ և գիմորոշ ու տառի յաւելմամբ: Սակայն յայտ է որ շատ մը տողերու այսպիսի հոմաձայնութիւնն եթէ ի սկզբան ներգաշակ ալ լսուի աղնջի՝ կը թմրեցնէ զայն, և լեզուին շնորհքը և հարստութիւնը կը նուազեցնէ, մանաւանդ եթէ իմաստի և արուեստի կողմանէ ալ սկար ըլլայ քերդուածն, կամ թէ Շնորհալի մը չըլլայ գրողն. որ թէ և նոյն ձայնով գրեթէ 4000 ութնտեան տող գրած է Յիսուս որդի ըսուած գիրքը, բայց իմաստից աղնուութեամբ կը զմայլեցնէ. այլ ոճքան ևս կըրնար յափշտակել զմեզ՝ եթէ ուզէր յանգերը ըստէպ փոփոխել, ինչպէս Բաբայ քերդուածին մէջ ¹, կամ գէթ քիչ մը ուշ փոփոխել, ինչպէս Խաչին (Բարձրացուցէք) Ներբողեանին մէջ, կամ Եղիսիոյ Ողբոց: Ինչ վերջաւորութեան մօտ է ան վերջայանգն ալ. և ասով կազմած է Յաղագս երկնից և զարգուց նորին գեղեցիկ 12 ոտնեայ քերդուածն, թէ և սա երկար բան չէ, այլ 200 տողի չափ: Անշուշտ աւելի հասարակ և անախորժ է եւս յանգն, որով կազմած է Շնորհալույ բուն Վիպասանութիւն ըսածն, որ եթէ այսու մասամբ իր գրուածոց մէջ ամենէն հետեւին է. յիշելու է որ իր գրուածոց մէջ ալ ամենէն աղնջին է, և մանկութեան գործ, ինչպէս ինքնին կը վկայէ անմեղադրութիւն խնդրելով: Հօս գրուածոց քննութեան հետ նորէն մեր պատմութեան թեւն ալ խառնելու է:

Ինչպէս վերը յիշեցինք՝ Շնորհալին քահանայ էր՝ բայց դեռ անկախ հասակաւ, ըստ իր ըսածին, այս առաջին գրուածը հրատարակած ատեն, յամի 1121, իր կենաց 19-րդ կամ 20-րդ տարին, կամ թէ աւելի ալ առաջ գրած. նոր թվերը պարզող քերդողին նպատակն կ'երևի իր նախնեաց կամ Պահլաւունի ցեղին յիշատակը թողուլ. բայց թերևս իբրև անձնական երևոյթ մը չտալու համար՝ կը յարէ զայն բոլոր Հայ ազգին ցեղապետութեան յիշատակին վերջը, այսինքն Հայկազն և Արշակունի ազգապետաց շարքին, զոր ըստ Մովսիսի Խորենացու պատմութեան կը համառօտէ, ազգին քրիստոնէութեան դարձն ալ յիշելով ի ձեռն Ս. Լուսաւորչի. որոյ ցեղին վրայ ալ վիպելով անկէ իջած կը ցուցնէ զնոր Պահլաւունին, և Մագիստրոսի վրայ յերկար խօսելով ապա անոր որդու Գր. Վիպասիին վրայ, և յետոյ իր եզբօր յաջորդութեանը և զինքը դաստիարակելուն վրայ գրելով կ'աւարտէ, 1600 ութնտեան տողէ աւելի: Իսկ վիպասանութեան սկիզբն ամենայն բանի սկիզբն կ'աւանդուի:

« Աստանօր սկիզբնաւորեալ,
Բանիս ըզբանն ըսկիզբն եգեալ
Այն որ ընդ Հօրն է եացեալ. և այլն »:

¹ Փանդի Հասեալ ի թիկունս աներեւոյթ օգնութիւն:

² Մայր Սիւնն զբարեբոն իւրովը:

³ Մայրն կուսանք ազգրս բազումս »:

⁴ Մայր Սիւնն զստեքօքն իւրովը:

⁵ « Շնորհօք սրբոյ Հոգւոյն լըցեալ եղեն սուրբ մարգարէքն,
Շարժեալ ի նմին ժամու. մեծ գոհութիւն մատուցանեն », և այլն:

¹ Ինքնին Շնորհալին այս քերդուածին մէջ յանգաց փոփոխութիւն ընելը՝ որ անկնջի ձանձրալի չըլլայ՝ կը վկայէ յիշատակարանին մէջ:

Ոչ մի տառի վերջ յանգական,
Չի մի ծուլից լուր ծանրանան.
Իսկ խորաբար փոփոխական,
Չի ընթերցողը ոչ ձանձրանան:

Անկէջ առաջ ալ նախերգանք մ'ունի (44 տող), սկսելով:

« Պարտական է հօր՝ որդի,
Հատուցանել վարձըս ծնողի
Եւ անդրադարձ փոխարինի
Բազում երկանցքն պատշաճի »:

որով կ'իմացնէ թէ իբր պարտք երախտեաց կ'ընծայէ զայն՝ իր հարց, և հաւանօրէն իր հայրախնամ կաթողիկոս եղբօր:

Որչափ ալ վերը հետեւակ գրուած մ'ըսինք այս վիպասանութիւնս, Շնորհալոյ արշալոյս մ'է, մանաւանդ երբ իր տարիքն ալ յիշենք, և անկէ աւելի՝ իր գիւտը. վասն զի ինչուան այն ատեն դեռ այսպիսի գրուած մը չէր երևցած մեր դպրութեան մէջ, այլ ինքն քերդողական վիպասանութեան օրինակ ընծայեց: Բայց 'ի նոյնաշանգուծենէն' (էաւ, էաւ) շարագրութե խորթութիւն չունի, այլ ողորկ է իր ուրիշ գրուածոց նման, և ազնիւ իմաստից բողբոջները ցուցնէ. ևս առաւել իր աստուածաբանական միտումն և յստակ տեսութիւնը, Ս. Երրորդութեան վրայ կանխաբանութեանը մէջ: Կ'երևի նաև ազգային եռանդուն ոգին, զոր չեն մարած հոգևոր և աստուածաբանական կրթութիւնը, այլ իրենց գերադոյն լուսավոր աւելի պայծառ և մաքուր ցուցնեն: Ասանց վրայ՝ բաւական ճարտարութիւն ալ կ'երևի համառօտելու ազգին պատմութեան կարևոր յիշատակները և անձինքը. որով աւելի ակործնութեց կրօնայ ըլլալ, քան իրմէ առաջ Խորենացին համառօտող արձակաբան պատմիչը: Միով բանիւ, նաև այս անկախ հասակի և նախադասեալ համբալի գրուածն, իբրև կատարեալ և կատարելոյ գրուած մ'ընդունեցաւ ազգն, մանաւանդ մեր ձաւորք ժամանակաւ. իր կենսագիրն պարզապէս կը յիշէ այս գործս, « Նա և զնախկին պատմա-« գրեալն 'ի Մովսիսէ Խորենացոյ՝ յազագս Նախ « նեացն Հայոց՝ վերստին չափաբերութեթ պատ « մեր, սկսեալ 'ի Տիտանեանն Բելոյ և 'ի նախ « նոյն մեր Հայկայ, և հասուցեալ մինչև 'ի հարս « իւրեանց և յինքեանս »: Ուրիշներն աւելի գովութեամբ ալ յիշեն, և նմանողութեան օրինակ կ'աւելուն. որոց գլխաւոր է Վահրամ Բաբուն ըստուած վարդապետն, 150 տարի ետև, որ յորդորանօք Ք լէոն Թագաւորի զուարճացողի և սիրողի Շնորհալոյ Վիպասանութեան, շարունակեց զնոյն, նոյն ոճով և ձևով, նոյնայանգ վերջաւորութեամբ, 1500 տողի չափ. յորում պատմէ Ռուբինեանց ցեղապետութիւնը, սկսեալ 'ի յարձակմանէ Թուրքաց, և Բագրատունեաց վերջին Փագիկ Թագաւորին պանդրխտութենէն մինչև իր ժամանակը, իբր յամն 1275. Թէպէտ յանգրգնութիւն էր կ'ըսէր « 'ի հրաշագեղ Վիպասանութիւն երանելի առն... (Ներսիսի) յարել ըզ « բանս իմ հիւծեալ »: այլ մտածելով որ ոսկէգոյն գործուածոց մէջ ալ երբեմն սև կը խառնուի՝ վերջապէս կը հաւանի գրելու:

Շնորհալոյ քերդողութեան կամ չափաբանութեան վրայօք խօսքերնիս գլխաւորելու համար, գոնէ գրուածին արուեստական կերպին, ըսեք՝ որ այս յիշեալ կերպով (ուժոտեան և նրման վերջայանգով) գրած է իր երկարագոյն քերդուածները, Յիսուս որդի, Ողբ Նգեսիոյ, Բան

հաւատոյ, Վիպասանութիւն, Խաչի Ներբողին կէսը, Ժամասացութեան երգերն, Չարչարանաց և Ննջեցեցոյ և ուրիշ Շարականներ, և այլն. իսկ կարճ քերդուածներն պէսպէս չափերով գրուած են, և ոմանք անյանգ են. ոմանք նոյնայանգ, ոտից չափն ալ 13էն ինչուան 5 կը զանազանի. այս ետքի պզտի չափով են Առաւօտ լուսոյ և Աշխարհ ամենայն՝ Առաւօտեան Ժամասացութեան մէջ մը. տած ջերմեռանդն երգերն: Այս կարճ քերդուածոց կամ տաղից վրայ՝ ուր որ յանգերն կը փոփոխին ամեն զոյգ տողի, յիրաւի զանազանեալ ներդաշնակութիւն մը կու տան, և ճարտար գրչի մը փորձ կը ցուցնեն, ինչպէս օրինակի համար, Սողոմոնի Առակաց Յիշատակարանն, որ կը սկսի

« Աստուածեղէն հոգւովն 'ի սմԱ՝
Խաղաղութիւն անունն արքԱ », և այլն:

յորում թէ իմաստից ամփոփման, թէ շարագրութեան և թէ այս յանգերու յարմարութեան մեծ ճարտարութիւն կայ. և չափէն աւելի կըրնանք ըսել. վասն զի ասոնցմէ դուրս բռնադատ հարկ մ'ալ դրեր է իրեն հեղինակն, ոչ միայն այբուբենի կարգով տողերը սկսանիլ՝ այլ և նոյն գրերով վերջացնել և յանգ կազմել. որ որչափ ալ աւելորդ կամ խաղաղիկ մը երևի, այնչափ ճարտարութեամբ և բնական կերպով յօրինուած է, որ խաղն և հարկն չի նմարուիր, այլ միայն վայելուչ գրուցուածն և ձայնն. և ինչ ալ որ ըլլայ՝ նաև յայսմ մասին առաջին կ'երևի Շնորհալին, թէ իբրև հնարող և թէ իբրև գերազանցող: Սովորութիւն ըրած է կարճ քերդուածներէն շատն այս այբուբենի կարգով տողել. երբեմն ալ վերջադարձ կարգաւ շարելով, այսինքն Ալբէն 'ի Քէ երթալու տեղ, Քէէն յԱյբ դառնալով. ինչպէս է նոր յիշեալ Առակաց յիշատակարանին ուրիշ յիշատակ մը, նոյնպէս նոյնագիր վերջայանգօք:

« Քաղցրագունիս այս բաղձանօք
Լըցեալ հոգիս մեռեալ մեղօք »: և այլն:

Շատ անգամ տնագլուխ կամ տողագլուխ տառք իր անունը կը կապեն, Ներսէս, կամ Ներսիսի է Բան, կամ Ներսէսի Դժապի կամ Տէր Ներսէսի Խաչիկոսի Հայոց, վասն զի շատ տաղերն իր կաթողիկոսութեանը ատեն գրած է. երբեմն ալ անոնց անունը՝ որոց համար գրած է. զոր օրինակ Աստեղաց և երկնից վրայօք քերդուածին տնագլուխը կը կազմեն Միթար Բժիշկ Բիւս 'ի Ներսէսէ զայս Բան: Նոյնպէս իր եղբօրորդոյ Ապիրատի համար գրուածն Առ Ապիրատի 'ի Տէր Ներսիսէ Բան լախձ կամ տաղին նիւթը, Բան 'ի Վիպաս 'ի Ներսիսէ. — Ի Սաբախն. — Սրբոյն Գրիգորի երգ 'ի Ներսիսէ. — Ներսիսի երգ 'ի Քառասուն Վայսն Ապրաքոյ, որ 'ի Սեբաստիա Խաբարեցան. — Առ Հովհաննէ Իոյս. և այլն: Այս խաղերէն կամ կապերէն զատ՝ երբեմն (այլ քիչ անգամ) այն կրկնաձայնութեան կերպն ալ բանեցուցեր է, որ ամենահին է յարևելեան քերդողութեան, կամ և սկզբնական արուեստ. և է տողին վերջին բառովն սկսանիլ յաջորդ տողը: Այս բանս կ'երևի սուրբ գրոց հրեարէն բնագրոց

մէջ. նոյնն կը նշմարի մեր լեզուին ալ հնագոյն մնացեալ երգոյն մէջ, որ գուցէ քանի մը դար առաջ երգուած է քան զՔրիստոսի թուականն. և է,

« Երկնէր երկին, երկնէր երկին » . և այլն .

Ըստ այսմ օրինակի են Նարեկացւոյ քանի մը տաղերն, ըստ այսմ և մեր Շնորհալուոյ տաղքն 'ի Լուսաւորին' Սրբէի յայնի, 'ի Քառասուն վկայն' Սրբի է հնչիւն, և յՈրդիան Որոտման, և այլն . ամեն երկրորդ տողի վերջի բառն՝ յաջորդին տընադուր ընելով . ինչպէս .

« Որդիքն Որոտման՝ որք 'ի վերուստ որոտացին,
Յամպոց հրեղինաց հողմով Հոգւոյն հընչեալ
յաւխարհս .

Յաւխարհ ծարաւուս՝ զանձրե կենաց հոսեալ
յերկնից » . և այլն :

Փալով քերդուածոց նիւթերուն կամ առարկային, յայտ է որ 'ի Շնորհալուոյ աշխարհային և պարզ նկարագրական բաներ պէտք չէ սպասել . ամեն գրուածն ալ հարկաւ բարոյական են, այլ ոչ զուտ խորատական կամ հոգեոր . այլ ասկէ սկսեալ, կամ թէ ըսենք յԱստուծոյ և 'ի հաւատոց խորագոյն խորհուրդներէ՝ ինչուան յԱռաքս և 'ի Հանելուկս կը զանազանի: Շնորհալին գիտած է զամենայն 'ի կրթութիւն մարդկան զըրէլ և քերդէլ . և լաւ գիտէր որ բարուց կրթութիւնն չէ միայն 'ի հոգի մարդուս, այլ և 'ի միտս և 'ի սիրտս . այս երէք զօրութեանց համար ալ գրած է զանազան բաներ . ոմանք պարզ Հոգի, հաւատոց և Քրիստոսի անօրէնութեանց վրայօք, խորհրդազգած և աղթախառն . ոմանք 'ի պառիւս և 'ի յիշատակ տօնից Քրիստոսի, Տիրամօրն, Սրբոց և հրեշտակաց, որք սովորաբար Տաղ կ'ըսուին . ոմանք Խրաքական և վարժողական, ինչպէս են տղայոց համար գրուածներն՝ այբուբենական կարգաւ և անուամբք տնտեսելով . զոր օրինակ .

« Աբն առաջին՝ ըզքեզ, տըղայ,
Հանէ յիմաստըն գերակայ...
Քիմն զանձէ քեզ բիւր բարի
Քրեւով զիմաստ 'ի տախտակի » . և այլն .

կէպէն ալ Բաբայան՝ զարգացելոց համար . ինչպէս են Սողոմոնի գրոց վրայօք յարմարցուցած յիշատակարանքն : — Ունի և Վարդապետական քերդուածներ, ինչպէս Յաղագս երկնից և զարդուց նորին . — ունի Թաւրէր, այսինքն իբրեւ նամակ գրած, միւթարական կամ ընտանեկան . այսպէս է գրածն . առ Ապիրատ ,

« Արեգական լուսոյ ծագման
Սէր քո առ իս համանրման » . և այլն .

կամ « Առ ոմն իշխան արեւելեան (Հայոց) վասն որդւոյն իւրոյ տարաժամ մեռելոյ .

Անտես է յոյսն աստուածային » : — Ծանօթ են երկու Վկասանութիւնքն . մէկն նախադիւն մտաց երախայրիքն՝ Ազգաբանութիւն Հայոց . միւսն յետոյ յիշելի Ողբն Եգեսիոյ : Ամենէն ըն-

տանեկան կամ Թախան քերդուած՝ են Հանելուկս կամ Թախան ըսուածն, իբրու Ուրախան, զըւարձութեան ժողովոց և կոչնոց ատեն ըսուելու և լուծուելու համար : — Այս ամենէն յետագաս աեսակս ալ պէտք է նշանակել ըստ բաղում գըլխոց . նախ իրենց հիւսուածքին անբաժանելի շնորհքն . երկրորդ առաջնութիւն, վասն զի Ներսիսէ առաջ այս ձև գրութեան օրինակ չունինք . երրորդ լեզուն, որ առավորէն կամ աշխարհաբաւ լեզուի է թէ հնագոյն գրուածն չէ՝ գոնէ ոտանաւորի մէջ հնագոյն է . չորրորդ՝ և մանաւանդ առաջին՝ հեղինակին նպատակը այսպիսի գրուածոց մէջ, որ է վերոյիշեալ բարոյական կրթութիւնն հանդերձ զբոսանօք և սրութեամբ մտաց :

Հիմայ է թէ քիչ մ'ալ իմաստից արժէքն և քերդողական ու բանաստեղծական հանձարը քընդելու չենք, նախ պէտք է անհրաժեշտ և անտարաւկոյս, որով և ոչ երկար քննութեամբ՝ խոստովանել, որ իբրեւ քերդող կամ չափաբան՝ Ներսէս Շնորհալի մեր լեզուին մէջ կամ առաջինն է կամ առաջնոց հաւասար . որ և է պարզ քերական մը կրնայ այս բանս գատել : Իբրեւ բանաստեղծ ալ՝ ընդ առաջինս դասուելու է աներկբայապէս, մանաւանդ է թէ գրուածոց կամ նիւթերուն զանաւորութիւն ալ նկատուի . չեմք իշխեր բանաստեղծի յանկարծական թռիչներով հաւասարել զինքը Քրիգորի Նարեկացւոյ և նմանեաց, կամ խոր վսեմութեամբ՝ Սիւնեցի և Մոկացի Ստեփանոսեանց, կամ այն առաջին թարգմանչաց վսեմութեմբ՝ որ հին դարերու սեփական կնիք է և գրեթէ անհնար է նորագոյն դարերէ պահանջել . 'ի վերայ այսր ամենայնի ունի Շնորհալին ալ զանազան քերդուածներ և քերդուածոց մասեր, (ինչպէս յՈղբս Եգեսիոյ և 'ի վերջ Յիսուս որդւոյն), որ բանաստեղծութեամբ ալ, վսեմութեամբ ալ պարզութեամբ ալ ընտիր և սքանչելի են . թէ և այսպիսիները գատել և օրինակ ընծայել գժար է . վասն զի քննաբանից ախորժակը ալ գժար կը միաբանին յայսմ, սակայն կրնանք անոնց գատաստանին և մեր ընթերցողաց յիշեցնել Շնորհալւոյ քանի մը արտագրութիւններ . Մեծի ուրբաթ (թու տաղն, Անէլ Ուրբա (Չափաբեր . երես 381), Ծառաւեցա՝ Տէրն 'ի Խալի (386), Խալի տաղն Նոր Դաւիթի եկելոցայ (412), և անոր Յորդորակն՝ « Կենաց փայտ տրեկեալ ըզքեզ տնկողին զԵգեմ » . (413) . Քառասուն վկայից տաղն Յորդորակն, « Բանիւ աւետաւոր բարառնաբար բարբառես . « ցուք » , (էթէ հարազատ Շնորհալւոյ մտաց ծընունդք են ասոր իմաստքն, վասն զի Ս . Մարութայի Արեւելեան Վկայից Ողբն կը նմանին) . Ս . Հովսիսիմեանց վրայ վայելուչ նկարագրական տաղն .

« Երջանիկ հոգիահրաշ
Կոյսըն մաքուր սուրբ Հովսիսիմէ » . (471) և այլն :

Շարականաց մէջ ալ՝ Վարդանանցն՝ Արիստեղալք առ հակառակսն, կիրակի օրուան Նորաստեղծեալի վերջին տունն, և այլն, և այլն : Ասոնց վրայ է թէ մէկ ուրիշ զգացմունք մ'ալ փնտռենք, որ կ'ըսուի քա՛ռա՛ն կամ գո՛ւա՛ն, կամ ուրախի, յայսմ Շնորհալին չունի իրեն հաւասարող . Յիսուս որդին, Ողբն Եգեսիոյ, շարականք Ննջե-

ցիւրց, շարականք Չարսարանաց կամ Խաչէլու-
թեան, զանազան տաղք և մանր երգք ժամասա-
ցութեան՝ անժխտելի օրինակներ կ'ընծայեն մեզ-
ասոնց և նմանեաց մէջ Ենորհալին կըրնայ ըսել
ինչ որ այն չարսարանաց երգոց վերջի տանն մէջ,
« Սիրտ իմ առ քեզ աղաղակէ »: — Սիրտ, հոգի
և միտք, և անոնց բացատրութիւնն բանիւ. Ենոր-
հալույ անձին մէջ միացեալ ձիրք մ'է, իբրեւ 'ի
զանազան համեմոց և հոտոց խառնեալ՝ նիւթ մը,
որ և 'ի միակերպութեանն՝ ունի սքանչելի զանա-
զանութիւն ճաշակաց: Այս գորովական զգաց-
ման կամ փափկաբանութեան հետ՝ նկատելով
իր իմաստից միշտ ազնուութիւնը և օծումը, շա-
րագրութեան միշտ վայելչութիւնը, և ձեռք զա-
նազանութիւնը, Ենորհալին ոչ միայն մեր նա-
խակարգեան հեղինակաց կը հաւասարի արժէիւք,
այլ և կը գերազանցէ զամենեւին առ հասարակ,
թէ իրեն և թէ անոնց մեղի հասուցած գրուած-
ներէն գատեղով. և եթէ մէկ կամ միւս տաղանդոյ
մասին մէջ առաջին չէ, բոլոր մտաւոր և գրաւոր
յատկութիւնները մէկ տեղ բերելով՝ դժար կ'ըն-
լայ իրմէ առաջին մը գտնելն: Այսքան գեղեցիկ
ձիրք և յատկութեանց միութիւնն է որ մեր հե-
ղինակը Ենորհալի կ'ընէ. իր գերազոյն յատկու-
թիւնն՝ է անհաւասարելի հաւասարութիւն մը
յամենայնի: Ենորհալին, եթէ չեմք սխալիր, այս
կերպ գերազանցութիւն մը կը պահանջէ. շնորհքն
ինքնին սքանչելի հաւասարաչափութիւն մ'է:
Կարգէ դուրս հանձար մը՝ թուի թէ շնորհաց չա-
փէն կ'անցնի. սուր և բարձր բանաստեղծական
թուիք կամ խորին վեմուութիւնք՝ դժուարաւ չա-
փի և կանոնի մէջ կը մնան. պոյծառ և անգին ա-
կանց կը նմանին, այլ առանձնակ բաներ են, շարք
մը, հիւսուածք մը, ամբողջ մը չեն ձևացներ. ր-
այնպիսի ամբողջ մը՝ որ հաւասարապէս սքանչելի
ըլլայ ամենայն տեսութեամբ, ամենայն յատկու-
թեամբ: Մեր հեղինակին շնորհքն այնչափ և այն-
պիսի է՝ որ իր քով անանկ սաստիկ և յանգուզն
թուիք մտաց ալ՝ շնորհքէ պակաս կ'երևին. ինքն
այնպիսի ամբողջութիւն մ'ունի՝ որոյ պակասու-
թիւն չի բերեր աւելի բարձր կամ խոր թուիք մը
չունենալն. թերեւ և պակասութիւն բերէր ունե-
նալն: Միով բանիւ այնպիսի բարձր և խոր թու-
ցիկ հանձար ունենալէն վեր է՝ հանձարոյ թեւերն
անգամ կառավարել, և այն օգտապարիկ հրապա-
րիկ երկնապարիկ երկվարն կամ արծուին անգամ
սանձել, և շնորհաց շիտակ շաւղէն վազցընել, ոչ
սաստկազայր արևներու պարունակաց մօտ, և ոչ
երկրաւոր ցրտութեանց, այլ միջին ճամբէ մը՝ որ
երկնից մէջ է, այլ երկրիս վրայէն: Ոչ այնքան
տարակուսիմ թէ կըրնար Ներսէս աւելի բարձր
խոյանալ՝ ի քերդուածսն և յիմաստս, որքան թէ
կըրնար այնպիսի գերազոյն խոյանաց մէջ ալ՝ այս-
պէս շնորհաբան և շնորհալի մնալ: Սակայն ոչ լոկ
գրաւորական արուեստ մ'էր Ներսիսի մտաց թե-
ւերը այսպէս նուաձեւով շնորհաց հարթ ու վորդ
ձամբուն մէջ շարժուիլ, այլ և հոգւոյն սքանչելի
և աւելի նուրբ և սուրբ յատկութիւնն մը՝ որ չէր
թողուր իրեն ծայրայեղ երևնալ՝ նաև 'ի հան-
ձարս, գերազանցելովն հանգերձ. յատկութիւն
մը՝ որ իր բազմափայլ շնորհաց ալ շնորհքն կըր-
նայ ըսուիլ, կամ կենդրոն ճառագայթից նորին-
դոր և յետոյ տեւիլ յստակ պիտի նկատենք: Հի-

մայ լմընցընէք ինչ որ ընդհանուր գիտելիք կամ
գիտելիք կայ չափաբանական գրուածոց վրայ. ո-
րոցմէ մեզի ծանօթներն 15,000 տող կ'ըլլան:

Լ.

Շնորհալի Երգեցող. — Հայոց Երաժշտութիւն:

Յայտ է որ այս գրուածոց մէկ մասն, Տաղերն
և Շարականք, ոչ միայն չափով են այլ և երգելու-
եղանակաւ: Ենորհալին ինչպէս ճարտար և աննը-
ման էր քերդողութեամբ, և այնպէս ընտրող ա-
կանջ և ախորժակ ունէր ներդաշնակութեւ, հարկ
էր որ երաժշտական ընտիր ճաշակ ալ ունենայ:
Ոչ մակամածական հետեանք մ'է ըսածնիս,
այլ և վկայեալ ստուգութիւն. և այնքան առա-
ւելութեամբ, որ իրեն գլխաւոր ձիրք մէկն ճանչ-
ցուեցաւ. մինչև իրեն երկրորդ մականուն և յայտ-
արար մ'ալ եղաւ ԵՐԳԵՑՈՂՆԷ՝ կոչուիլ, ինչպէս
կ'անուանենք կը տօնենք մենք զՍ. Ռոմանոս Ե-
մեսացի սարկաւազն Յունաց, զոր իրենք իրենց
ընդունով կոչեն Սիմֆոնիստէս: Աւելորդ է յիշա-
տակել, թէ որչափ որ մարդկային սրտի քաղցր է
երգն, այնքան ալ պանծալի է քաջ երգահանն,
և այն մանաւանդ որ յատուկ մակագրութեամբ
Երգեցող կոչուի: Սակայն պէտք չէ հարեանցի
յիշատակաւ մը միայն նկատել զայս 'ի Ենորհալին՝
և թողուլ երթալ. այլ հարկ իսկ է ճանչնալ այս
երկնախառն արուեստ կամ տուրքը՝ Երաժշտու-
թիւնը, իր մէկ մեծ շնորհք կամ շնորհաց յար-
գարիչ մը. և երբ ինչուան հիմայ նկատածնիս 'ի
Ներսէս և յետոյ այլ աւելի նկատելիքն՝ գումա-
րենք իբրեւ 'ի մի պատկեր և 'ի մի տեսութիւն,
չեմք կըրնար ուրիշ կերպով տեսնել զնա՝ բայց
իբրեւ բովանդակ բանական երաժշտութիւն մը,
կենդանի ներդաշնակութիւն մը, աստուածային
և բնական շնորհք խառնեալ ամեն մէկ ձիրքն՝
մէկմէկ ձայնի նման, որոց բոլորն մէկ եղանակ
կազմէ. ոչ Երգեցող միայն, այլ և Երգ ողջոյն,
յարմարեալ շնորհագարք շարժմամբ մարմնոյ,
չրթանց, մատանց, մտաց և հոգւոյն: Թէ արդեօք
գեղեցիկ գրուածոց և եղանակաց նման գեղեցիկ
և անոյշ ձայն ալ ունէր, հաւանական կըրնանք
ըսել. և եթէ չկարենանք հաստատել բնական
գործարանաց կամ կազմուածքին տուրքը, չեմք
սարակուսիր կրթութեամբ, արուեստով և շնոր-
հք քաղցրութեանը վրայ. գուցէ Երգեցող ա-
նունն ալ՝ ոչ միայն երգահանութիւնը այլ և ձայ-
նական կարողութիւնը նշանակէ:

Գիտնալու է որ Երաժշտութիւնն կամ եր-
գեցողութիւնն, գէթ ըստ եկեղեցական կարգի,
մեծ պարապմունք և արուեստ մ'էր, և կըրնանք
ըսել եղած Բ ամեն տեսն՝ մեր վարդապետանու-
ցաց և վանորէից մէջ. թերեւ և միակ զարգացած
արուեստ չափաբանականաց մէջ՝ յետ քերդողու-
թեան: Նոյնպէս յայտնի է թէ մեր աղքն ինչ մեծ
վարկ և սէր ունի իր հին սրբազան Երգողաց կամ
շարականաց հեղինակաց վրայ, որով շատ հեղ այս

1 Այսպէս կոչէ Սամուէլ Անեցի, ժամանակակից Ենոր-
հալոյ:

գրոց հաւաքման ճակատը կը տպագրէ մեր երա-
ժրշտութեան վրայօք գրուած խօսք մը, կամ գո-
վեստ մը երգահանաց վրայ, կամ ցանկ մ'անոնց
անուանց. սկսեալ 'ի Ս. Սահակայ և Մեսրոպայ
և յաշակերտաց նոցին, որոց թարգմանութեան
արուեստին հաւասար պարգև մը համարուի և
երաժշտական գիտութիւնն. և յայսմ մասին ևս՝
որպէս 'ի քերդողութեան՝ գերազանցեալ պա-
տուի Մ. Խորենացին. մինչև աւանդախառն պատ-
մութեամբ գերագոյն յերգս նորա գրուի Ուր-
խայր Սեբեոսի սքանչելի շարականն, զոր և հրեշ-
տակային ձայնով երգած է կ'ըսեն մասնաւոր առ-
թի մը մէջ: Աղգային լեզուի յստակութեան սըր-
բազան աւանդին հետ՝ նախնիք այս սրբազան եր-
գեցողութիւն ալ աւանդեցին յաջորդաբար. — այս
երկուքս՝ առաւել քան զամենայն ցանկալի աւան-
դութիւն. — և ասոնցմով՝ աւելի քան թէ այլ ամե-
նայն մասամբք բանական արուեստից՝ յաջողեալ
են մերայինք՝ իբրև 1000ամեայ դարու միջոց. ա-
նով մեր շարականաց հաւաքմունքն՝ որ 800 տա-
րուան գործ է, այնքան զանազան դարուց և գի-
պաց միջոց ալ՝ ազնուութեան շնորհքն, արժէքն
և ոյժը պահած է: — Շնորհալոյ Երգեցող կո-
չումն, իրմէ մնացած մեր եկեղեցւոյ բազմութիւ
երգերն և տաղերն՝ յայսմ մասին ալ զինքն թէ
ոչ ժամանակաւ առաջին՝ արգեամբք ընդ առա-
ջինս կը դասեն, մանաւանդ թէ առաջին և վեր-
ջին. որովհետեւ ինքն լրացուցած է ժամասացու-
թեան երգերը, իրմէ վերջը՝ քիչ շարականք ա-
ւելցած են. այս իր շնորհքը լաւ ճանչնալու հա-
մար՝ կ'արժէ որ քիչ մ'ալ երկարաբանիք այս
արուեստիս վրայօք. ինքնին իսկ երաժշտութեան
ոգին ալ կարծեմք ներէ մեզի:

Աղգային քերդողութիւն կամ չափաբանութիւ
և աղգային ոճ մը ճարտարապետութեան, կըր-
նային գուռակել տալ որ Հայք աղգային երաժշ-
տութիւն ալ ունեցած պիտի ըլլան, գոնէ այն-
չափ որոշ և իսկատիպ՝ որչափ են այդ երկու չա-
փական արուեստքն, և գոնէ բաւական ընտիր
ճաշակ մ'ունեցած են յայսմ ալ. և որչափ ալ
Մ. Խորենացի մեղադրէ մեր հնագոյն նախնեաց
անփոյթ ըլլալը երգարանաց բանաւորաց, աւելի
գրաւորի քան եղանակաւորի համար իմանալու է
ըսածը. որովհետեւ ինքնին շատ անգամ կը յիշէ
Հայկազանց վիպասանից հետ՝ Յրցովք և Բամբ-
ռամբք երգիչներն ալ. իրմէ առաջ ալ՝ Բուզանդ,
իրմէ վերջ ալ այլք՝ երգասէր ցուցնեն զՀայս:
Իսկ մեր միջին և յետին դարուց գրողք՝ մեր թարգ-
մանչաց կ'ընծայեն՝ ինչպէս շարականաց շարա-
գրութիւնը՝ նոյնպէս և եղանակաց հնարումը.
Յայսմաւուրքն Ս. Սահակայ համար կ'ըսէ, թէ
10 ձայն բաժնեց եղանակները, և աղուաբար կ'ա-
ւելցրնէ, « Ըստ թուոյ տասն արարածոց (!) 'ի չո-
« րից ձայնից 10 բարդեցաւ. և չորս ձայնք 'ի չորս
« տարերցս ունին զգայունքն. որպէս և նա ձայնն
« 'ի հողոյն, և բն 'ի ջրոյն, քն 'ի յօգոյն, քն 'ի
« հրոյն. և 'ի չորս ձայնիցն՝ բաժանեաց չորս կողմ.
« (և) Վառ և Վերջ երկու ստեղին: Որք ունին
« և այլ յատկութիւնս. զի նա ձայնն 'ի հիւսնա-
« կանէն է. քն 'ի դարբնէն. ք 'ի գետոց. ք յաղո-
« րեաց. և յերկաթոյ. ք 'ի ծովու ծփանաց. է
« յանասնոց, ք 'ի գազանաց. Թ և Ժ 'ի հաւուց. »:
Ուրիշներն կ'ըսեն թէ հին Ստեփանոս երաժիշտ

մը 26 եղանակ հնարեր է՝ բնական իրաց և կեն-
դանեաց ձայներէն առնելով: Հաւանականն այս է
որ թէ հին աղգային եղանակաց և թէ Յունաց ե-
կեղեցական երաժշտութեան յարմարեցած են
Թարգմանիչք՝ մեր եկեղեցւոյ երգերը: Շատ հեզ
եղանակաց համար ըսուած և տաղից վրայ գը-
րուած է 'ի գիրս մեր՝ Խորաշայն եղանակ կամ
ձայն, լաւ և ճարտար երաժշտական ըսելու մըտ-
քով. այս անունն յայտնէ զԽորով Փէրվիզ կամ
Ապրուէզ անուանի թագաւորն Սասանեանց Պար-
սից, Չ գարուն վերջը և Էին սկիզբը. որ կ'ըսուի
թէ շատ երաժշտասէր ըլլալով՝ երկու ճարտար
երաժշտաց ձեռքով այս արուեստը կանոնեց և
զարգացուց. մէկն էր Սարգիս, զոր Հռոմ կ'ա-
նուանեն, միւսն Պարպուտ կամ Պէրպուտ Շի-
րազի, որոյ անուամբ նուագարան մ'ալ յիշուի
նաև Հայոց մէջ Բարբուտ կոչմամբ, որ փոխա-
նակեց զհին բամբիւն Հայկազանց: Այն ատեն
ներն Հայք գեւ Պարսից իշխանութեան տակ և
անոնց արտաքին սովորութեամբք ալ վարուէին.
շատ հաւանական է որ Խորովայ երաժշտաց ա-
րուեստն՝ եթէ անծանօթ էր իրենց, անոնցմէ
ընդունեցան, և այնուհետեւ սովորութիւն եղաւ
մեր երաժշտաց ալ՝ խորովային անուանել անոյշ
և քաջարուեստ եղանակները. ինչպէս սոյն իսկ
մեր Շնորհալոյն համար կ'ըսէ Կիրակոս պատ-
միչ. « Կարգեաց... քաղցր եղանակաւ, Խոր-
« լայն ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտա-
նաւորս »:

Սասանեան Խորովայ ժամանակակից կաթողի-
կոսն մեր Կոմիտաս՝ բանաստեղծութեանը հետ
երաժշտական ախորժակը կ'իմացրնէ Հռիփսի-
մեանց շարականին մէջ: Չնոյն արուեստ պէտք է
ընծայել և մեր ամենէն հին համարողին՝ Անանիայ
Շիրակացւոյ, որ մօտ էր ժամանակաւ վերոյիշե-
լոյն: Իսկ յաջորդ Ը գարուն սկիզբը Ստեփանոս
Սիւնեցին իր գերազանց շարականոցն, և իր քոյրն
Սահակագուհիս՝ երգահանութեան շատ մեծ համ-
բաւ թողած են: Իբրև մուգայի մը՝ կու գային այս
տիկնոջ գաս գաս մարդկան լսելու և վարժելու.
և ինքն՝ վարագուրի ետեւ կեցած, վասն պարկեշ-
տութեան, կը սովորեցնէր: Անշուշտ այնպիսի ե-
ղանակաց վրայ զմայլեալ դարուն պատմին (Ղե-
ւոնդ երեց) կ'ըսէր. « Հրեշտակական երգք՝ 'ի
« վերայ երկրի »: — Ժ գարուն մէջ երբ Բագրա-
տունիք ազատեցին զախարհս Հայոց յԱրաբա-
ցւոց բռնաբարութենէն, և վանորայք նորոգիլ սկը-
սան, սրբազան երաժշտութեան արուեստն ալ
նորէն զարգացաւ, և դարուն պատմին (Ստեփ-
Ասողիկի) և այլք՝ մեծ գովութեամբ կը յիշեն Կա-
մրջաձորոյ, Նարեկայ, Տաթևու, Ղազարու
(Մշոյ) վանաց երաժիշտները. և յանուանէ՝ զՍա-
մուէլ Կամրջաձորոյ վանահայրն, որոյ ձայնը լսած
էր թերևս Թառնեցի Գէորգ վարդապետն ալ, որ
100 տարուան վախճանեցաւ հօն՝ յամի 1094,
« և էր երաժիշտ 'ի վերայ ձայնաւոր եղանակաց », ըստ
Ուռհայեցի Պատմիչին: Ասոր ատենն էր Պե-
տրոս Գետադարձ պերճափայլ կաթողիկոսն, որ
Կ. Պօլիս դացած ատեն՝ եպիսկոպոսաց և վար-
դապետաց հետ՝ գաս մ'ալ ընտիր եկեղեցական
երաժշտաց հետը տարաւ յարքունիս կայսերաց:
Իր բարեկամն և մեր Պահլաւունեաց իմաստասէր
նահապետն Գրիգ. Մագիստրոս՝ իր թղթոց մէջ

շատ հեղ և մեծ գովութեամբ յիշէ զԴանիէլ ոմն երաժիշտ, նոր Որփեւս կոչելով. ասոր թուի անսովոր մնացած շարական մը, Մեծացուցէ, Եկ. որոյ անագլուխը Դանիէլ կապեն, և սկսի « Դա. « սապետըն հրեշտակաց և սպասաւոր երկնից « արքային » և այլն: Գուցէ այս ժամանակներս ապրած ըլլայ ուրիշ ճարտար երգիչ մ'ալ՝ Գուգի Այրիւնէյի, հեղինակ Մեսեդի ըսուած երգոց: Ենորհալը կրսեր ժամանակակից կըրնայ ըսուել Խաչապուր Տարօնացին՝ եղանականիշ խաղից նո. բողոքով¹: Թողով ժի գարէն վերջը յիշեալ երաժիշտները, զի մեր պատմութեան սահմանէն դուրս կ'ենեն, յիշենք բուն իր ժամանակի և քիչ ետեւ անուանի երաժշտութեան Վարժարանը, Սեաւ լերանց և Կիւլիկիոյ նորահաստատ վանքերը. յորս աւելի գովութեամբ կը նշանակուի Արքա. կաղնոյ վանքն, և ալ յետոյ Սըսոյ երաժիշտ վարժապետքն, որոց արուեստն և դասաստանն իբրեւ պատգամ սեպուէր այն ժամանակ: Ասոնց վարպետներէն մէկը կըրնանք սեպել Թէրաթ Լաւրի. « Իւ, զոր Մեծ Վկայասիրին ատեն տեսանք կաթո. ղիկոս 'ի Հոնի (42)²:

Այս յետին Տօրոսեան անապատաց և լերանց մէջ վարժեցաւ մեր Ենորհալի Երգեցողն ալ՝ աստուածատուր ձիրքը արուեստի հետ խառնել, և իմաստից ու տողից հետ ծնանիլ և եղանակներ, և ըլլալ նուագաւոր փիլիսոփայ մը. վասն զի այս գեղեցիկ արուեստին կամ գիտութեանս՝ իմաստասիրութեան լծորդ և լրումն ըլլալը՝ պղատոնական մտօք ճանչցեր էին մեր վարդապետք և վանականք, և պարզապէս Փիլիսոփայ կ'անուանէին զերգեցողս եկեղեցւոյ. ինչպէս հին Տօնացոյց գրող մէջ ալ անուանին. « Զգենուն միաբան քահանայքն և սարկաւագողնք և փիլիսոփայք »: Նոյն ինքն Ենորհալին վկայէ այս բանին Դանիէլ Ան. յաղթ Փիլիսոփայի գրած Խաչի Ճառին մեկնութեանը մէջ. « Եւ զի ունիմք սովորաբար ասել « Փիլիսոփայ որը յերաժշտական արուեստս կա « տարեալ են. այսպէս և Դաւիթ Անյաղթ, ոչ « միայն փիլիսոփայ այսպէս, այլ և յաստուածե. « ղէն և յարապին հրահանգս անթերի »:

Իր տուած մեկնութեան համեմատ Ենորհալին ալ փիլիսոփայացաւ անթերի. և անդադար կ'երգէ Հայոց եկեղեցւոյն մէջ իր բաղմապատիկ Տաղերով, Երազականերով, և Գանձերով, թէ սուրբ պատարագի և թէ ժամաստեղութեան ամեն ժամերուն պատշաճեցուցած երգերով. մանաւանդ սրբազնագոյն օրերու՝ Մեծպահոց և Մեծ շաբաթ. թուն. որոց խորին յիշատակները՝ աւելի զգալի և անորժելի ընել կու տայ իր քրիստոսասէր աղքայնոց. և իբրեւ իր հոգւոյն մաքուր թերթով կապելով զանոնցն ալ՝ ջանայ քաջելու յերկինս. ուր կատարեալ աստուածերգակ մ'եղած՝ ընդ Դաւթեանց և Ստեփանոսեանց, մանաւանդ թէ ընդ հրեշտակաց, անսպառ երգանայ աստուածա. յին սիրոյն մէջ. որոյ իբրեւ տկար, այլ գեռ բա.

ւական արձագանգ մը կը լսեմք, և յուսամք որ եկեղեցին Հայոց՝ անոր սրտէն բխած և մասնե. լով յարմարեցուցած երգերն ու եղանակները՝ ան. ընդհատ լսելով և նուագելով, հասնի և հասցընէ մինչև երկրաւոր ձայնից լռելու և միայն երկնաւոր ձայնից լսուելու օրը. յորում՝ հայածին սուրբ մայրն ալ իր քրիստոսակնիք որդեկաց « Սիոնի որդիք, զարթիք » կանչելով յետին անգամ, պըճ. նեալ զարդուքն ընդառաջէ անմահ փեսային և պսակուել յաւիտենական փառօք: — Այսպիսի անգին յուսովք կը պարարէ սրտերնիս ամեն կի. րակի՝ մեր Երգեցող Ենորհալին յեկեղեցիս Հա. յաստանեայց:

Իմաստից և բացատրութեան կողմանէ ալ իր սովորական և կարեւոր շնորհօքն՝ ունի յստակու. թիւն և աստուածային եռանդն, որով թէ իմա. նալի է հասարակաց և թէ յորդորիչ սրտից, միան. գամայն և մտաց անորժելի՝ գեղեցիկ հանձա. րովք: Եւ յայսմ զարմանալի բան մ'ալ կայ գի. տելու, որ այս գեղեցիկ շարականաց և տաղից մեծ մասն իր կաթողիկոսութեան ատեն երգած է. կե. նաց այն յառաջացեալ մասին մէջ՝ յորում սովորաբար լռեն երգք 'ի շրթունս քերդողաց, և ծա. լունին աշխուժից թեւերն. իսկ մեր պանչելի Եր. գեցող Փիլիսոփայն 65-70 տարեկան միջոց ալ որ. պէս և յերիտասարգութեան ըսելով « Բղխեսցեն « սիրտք մեր զբան բարի, և լեզուք մեր պատ. « մեսցեն զգործս երկնաւոր թագաւորին », բըղ. խած է այն վերոյիշեալ բաները, որ առոյգ և ե. ռանդուն հասակի մը արտագրութիւն պիտի կար. ծէինք, եթէ չչիտնայինք 'ի պատմութեանէ զժա. մանակը: Այնքան ուրեմն մեծ և տաք է եղեր Ներ. սիսի սիրտն և հոգին, այնքան եռանդուն միտքն և հանձարն, որք միշտ առոյգ և մանուկ մնացեր են, երբոր մարմինն միայն մաշկելով և հըննալով՝ ալ չէ կըրցած այնպիսի ուժով և թուշուն հոգւոյ ըծա. կից մնալ:

Այս կարողութեան վրայ աւելցընելու է և ճարտարութիւնն եղանակաց զանազանութեան և ներգաշնակութեան. որոյ եթէ մենք չեմք կըրնար երաշխաւոր ըլլալ, եթէ գարուց երկարութեամբ այնպիսի նուրբ արուեստի փոփոխութեանն հա. մար, կրնամք հաւատալ ժամանակաւ մերձաւորին վկայութեանը. որ յետ գովելոյ զիմաստս բանիցն՝ կ'ըսէ. « Եւ թէպէտ և հրաշալիք էին բանք եր. « գոց նորա առ միտս իմաստութեան, բայց եւս « առաւել զարմանալի էին արուեստք զանազան « եղանակացն՝ զոր աննման միմեանց օրինէր. որ. « պէս անծախելի և յառատագոյն յարնձարանէ՝ « 'ի Ճոն և 'ի հարուստ մտացն արտաբերեալ »: Բողորովին ալ հիմայ փոխուած չեմք կըրնար ըսել Ենորհալը եղանակները, զորս քիչ մը մեր երա. ժըշտական արուեստի խաղերն պահած են, քիչ մ'ալ ականջալուր վարժութիւնն. միայն թէ շա. տերն 'ի սկզբան աւելի ներգաշնակաւոր և աւելի քաղցրանուագ կըրնանք համարիլ:

Արդ Ենորհալը այս երաժշտական ձրից վը. րայ յերկար զարմանալէն վերջը, հարկ է որ թօ. թափենք զմեզ այն զմայլիչ արուեստին կպչուն և թուշուն թեւերէն, և դառնանք իր երկրաւոր կե. նաց ընթացքը բռնելով անոր զանազան դէպքերն, և իր ուրիշ բաղմապատիկ տուրքերը գիտել:

¹ Սա յետոյ ալ պիտի յիշուի մեր պատմութեան մէջ:

² Սըսոյ և Մեծ Հայոց երաժշտութեան կամ երգող մէջ մեծզանազանութիւն մ'եղած կ'երևի, և անկէ Դա. րականաց զանազան կոչումն. մէկն Թափաբջի, մէկայլն Արիւնջի: Դարձեալ Երազականաց ընտիր օրինակները Խաչի կ'անուանեն գրիչք ԺԳ-ԺԵ գարուց. այլ Խուլ կամ Խլիկ հեղինակի ով և երբ ըլլալը՝ չկարգանք ստուգել:

Ը.

Փոխադրուրիս կարողիկոսական արտոյ 'ի
Ծովք Դղեակ — Գաղարական վիճակ ժամա-
նակին 'ի սահմանս բնակութեան Շնորհարայ
և 'ի Մեծ Հայս :

Շնորհարայ Վիպասանութեամբ մատենագրու-
թիւն սկսելէն, որ է 1121 թուականէն, մինչև 15
տարի, երկուստարգութեան միջոցը, ծածկուած
կը մնայ մեզմէ. պատմական յիշատակ մը չեմք
գտած այս տարիներուն, այլ կը համարեմք զնա
թագուցեալ այն խորհրդական և սրբազան ա.
ռանձնութեան և լուութեան մէջ, յորում և փր-
կիւն և վարդապետն աշխարհի՝ տէր մեր Քրիստոս,
ծածկուած և լուծ մնայ 'ի տան Մօրը, մինչև
ընդ աշխարհի կատարեալ հասակաւ՝ ելաւ 'ի քա-
ղաքութիւն: Այս տարիներուն մէջ Շնորհարի իր
առնունակն կրթութիւնն աւարտած և իր կա-
թողիկոս եղբոր օգնական ըլլալ սկսած է: Մէկ
միայն դիպուած մը կը յիշուի այս միջոցիս. և է
կաթողիկոսութեան աթոռոյն տեղափոխութիւն:

Ասոր տարագրութիւն 'ի հայրենի աշխարհէն և
'ի միջոյ բազմութեան բնիկ ժողովրդեան՝ բարեւա-
կան գերութեանէն երկար քշեր էր. 80 տարիէ ա-
ւելի էր. կաթողիկոսը և հաւատացեալք փափա-
գէին դառնալ նորէն 'ի Մեծն Հայաստան և 'ի
վերջին մայրաքաղաքն Անի, որ գեռ թագաւորա-
կան շնորհքով պայծառանայր, և ուր գեռ քիչ
առաջ Բարսեղ իբրև կաթողիկոս կը նստէր. Քրի-
ստոս ալ փափագէր իր նախնեաց և ազգականաց
քով երթալ, և ազգին կենդրոնը կենալ. և արգէն
գաղտուկ բանադնացութիւն ըրեր էր Անոյ իշխող
ամիրային Ապուլ-Սուարայ հետ, և հաւանու-
թիւն առած էր. և մինչդեռ յարմար ժամանակի
կը սպասէր, Անոյ բնակիչքն այս բաներս չգիտնա-
լով, և իրենք ալ իրենց կերպով օտարի իշխանու-
թեանէն ազատիլ և քրիստոնեայ իշխանի ձեռք
անցնիլ ուզելով, ծածուկ գաշակեցեցան Վրաց
Դաւիթ թագաւորին հետ, որ յանկարծուց ե-
կաւ զօրօք յԱնի. քաղաքացիք ընդունեցան, մատ
նելով անոր ձեռքը զԱպուլ-Սուար և որդիքը,
զորս Դաւիթ տարաւ արգիլեց բերդի մը մէջ 'ի
Վիրս, ուր և մեռան նեղսրտութեամբ: Բայց քիչ
ատենէն ինքն Դաւիթ ալ մեռնելով Ապուլ-Սուա-
րայ երեց որդին Փատուէն եկաւ պաշարեց զԱնի,
և յետ երկար ընդդիմութեան և սովոյ՝ առաւ, ու
հօրն և եղբարց մահուան վրէժը պահանջեց: Այս
բանս լսելով Քրիստոսի կաթողիկոս շատ նեղա-
ցաւ. Անեցոց անխոհեմ գործոյն, որ իր գիտաւո-
րութիւնն և զործն ալ ունայնացուց. վասն զի
ալ չէր համարձակեր Փատուէնէն նոյն ընդունե-
լութիւնը գտնել, ինչ որ խոստացեր էր անոր
հայրն, այսպէս չարաչար մատնեալ և մեռեալ:
Անին ալ այն առթով շատ մարդ և վայելչութիւն
կորուստեր էր: Արդ հարկ եղաւ Քրիստոսի որ
նորէն իր եղած երկրին մէջ ուրիշ յարմարագոյն
տեղ փնտրուէ Հայոց հայրապետական աթոռոյն:

Իր առաջին նստած տեղն հաւանորէն էր այն

Շուգր անապատի վանքը, ուր և Բարսեղ նստէր
հրամանաւ Մեծ Վիպասարին. կամ թէ երբեմն
հօս և երբեմն 'ի Կարմիր Վանս նստէին երկուքն
հարազատքն, Քրիստոսի և Ներսէս. որք երբ լսե-
ցին Անոյ նորէն նուաճիլն 'ի Փատուէնէ յամեն
1125, ելան, եկան իրենց ծննդեան տեղը և հայ-
րենի տունը, 'ի Մով, զոր հայրերնին Ապերատ
ամրացուցեր էր. իրենք ալ նորէն նորոգելով հօն
հաստատեցին քառորդ դարու մ'ալ Հայաստա-
նեայց տապանակը. որով հարկ է մեր եկեղեցա-
կան աշխարհագրութեան մէջ նշանաւոր կէտ մը
սեպել զայս, և սրբազան յիշատակներ ալ փըն-
տուել հօն: Այլ գծադրաբար և ոչ իսկ տեղն ո-
րոշակի կըրնամք նշմարել. վասն զի թէ և ինչուան
հիմայ կարծուէր թէ այս տեղս պիտի ըլլայ Խար-
բերդի և Արզնոյ միջոց եղած Մովք լըճին մէջ, որ
հիմայ Կէօճիւկ կ'ըսուի յայլազգեաց, սակայն
հին պատմըաց կարճ յիշատակներն, և քաղա-
քական վարչութիւնք ժամանակին՝ չեն ներեր
այսքան հեռու տեղ փոխադրել մեր հայրապետ-
նէր և իրենց աթոռը. վասն զի եթէ այն (Խար-
բերդու) կողմերն ազատ և հանգիստ ըլլային Թուր-
քայ ձեռքէն՝ աւելի յարմար և աւելի կեդրոնա-
գոյն հայկական տեղ մ'ալ կըրնային երթալ մեր
հայրապետք, ինչպէս որ փափագէին իսկ. իսկ ե-
թէ Թուրքաց իշխանութեան տակ էին, (և էին
հաւաստեալ), չէին կըրնար հօն երթալ: Արգէն
այն սակաւ պատմական յիշատակքն, և նոյն
իսկ Շնորհարին թէ վիպասանութեան մէջ, թէ
30 տարի ետե Հաւատոյ բանին յիշատակին մէջ՝
զՄով միշտ Դէս-է կ'ըսէ, և ոչ երբեք Լըճի նը-
կարագիր կու տայ: Ուրեմն այս տեղս իրենց
առջի բնակած տեղէն՝ Սեաւ լեռանց վանքերէն՝
շատ հեռու չէր. Աթոռն քիչ քիչ կամ իբր
ոտն առ ոտն կը տեղափոխէր. հաւանորէն Մա-
րաշու և Անթապու միջոց տեղ մ'էր. վասն զի
հաստատութեամբ կ'ըսուի որ Անախթայ Լա-
տին իշխանութեան սահմանն էր, և յատուկ
գաւառն Տլուք կ'ըսուէր, և տաքարիւն Ժօպէն
Փռանի իշխանին կալուած էր. գուցէ ուրիշ Կէօ-
ճիւկ լճի մը մօտ (Կեալուր Կէօճիւկ), ուր և
հնախօս աշխարհագիրք զնեն զՏլուք աւանն: Թէ-
պէտ բաւական ամուր էր տեղն, այլ ոչ շատ. և
ոչ ալ ընդարձակ, վասն զի Փոք Դէս-է կոչուի.
այլ այն ատեն իրենց համար յարմար չափաւոր
երևցաւ. իսկ մեզ համար շատ ցանկալի է հետա-
քննութիւն թէ այս տեղոյս և թէ բոլոր Սեաւ
Լեռանց բաղմաթիւ վանորէից, որք ԺԱ-ԺԳ դա-
րուն Հայոց ամենէն սրբազան և գիտնական գա-
ղաքն էին. և որոց վրայ այսօր Թանձր վարագոյր
մը քաշուած՝ կը ծածկէ, ո՞ր գիտն որպիսի եկե-
ղեցեաց և շինուածոց նշխարքներ. ո՞րքան յիշա-
տակաց արձանագրութիւն, և հուշակաւ անմա-
հանալի անձանց՝ մուսայեալ մահու քարեր:

Ինչ էր արդեօք այս տեղափոխութեան պատ-
ճառն. — մասնաւոր գիպուած մը չեմք գիտեր.
բայց հաւանական է այն միջաստման երկրին համ-
օրէն վերգովումն և բռնաբարութիւն 'ի զանազան
ազգաց և 'ի բազմաթիւ տիրապետաց. և վախ՝
անհաստատ և անստոյգ ձեռաց մէջ ինկնալու:
Վասն զի յետ մահուան մեծ իշխանին Գող Վասիլ
(1111) իր քեռորդին Տղայ Վասիլն իշխեց Քեանոյ
և սահմանաց, բայց ոչ յերկար. իրմէ զօրաւոր.

ներն կոխեցին իր սահմանները. խոյս տուաւ գընաց առ աներ իւր Լեւոն՝ Թուոն Ռուբինի՝ մեր ազգին Կիւլիկեան հարըստութեան նահապետին. այն ալ չափէն աւելի ուժով մը բռնեց զինքը և արգիլեց: Իր իշխանանիւստն Քեսուն՝ ինչպէս և Մարաշ՝ ընկան Եդեսիոյ Լատին Կոմսից իշխանութեան տակ, որուն այն ատեններն յաջորդեր էր առաջին և քաջն Ժոսէինի որդին Ժոսէն Բ, որ յետոյ Թողուց այն տեղումքը իրեն պէս տալարիւն և անխոհեմ, այլ իրմէ քաջ իշխանի մը, որ էր Պալտին՝ եղբայր Ռեմուանդի՝ բրընձին Անտիոքայ: Այլ չի կրցան ինչուան ետքը պաշէլ իրենց կալուածքը՝ այլազգեաց յափշտակութեն. նախ Քեսուն կորաւ, Կեսարիոյ և Մեղիտինոյ տիրապետող անուանի Տէնիշմէնեան ցեղէն Մահմուտ սուլտանին ձեռքով, որ յամին 1136 աշնան ատեն եկաւ պաշարեց զՔեսուն, չորս դին աւրըշտեց իւր յալըստութեամբ Պալտին՝ Յունաց (Յովհաննէս) կայսեր դիմեր է 'ի Կիւլիկիա, և նա խոստացեր է օգնել, Թողուց զբերդաքաղաքը, և անոր տեղ մեր կաթողիկոսաց սրբացուցեալ Կարմիր վանքը այրեց և տւրեց, միանձանց խրճիթներ և եկեղեցեաց սուրբ սպասները փշաջուց, գնաց. Թողուց այն հոգաւոր տեղը՝ « որպէս տատարակ սգալից միայն « մնացեալ 'ի զուգակցէ, կամ որպէս զապուաւ « զաղբատեսակ նստեալ 'ի վրայ կոթողոյ », ինչպէս կ'ըսէ պատմիչն (Մատթէոս): Սակայն Պալտին վատահ չըլլալով տեղը անվտանգ պահելու՝ զօրքերն առաւ գնաց Եփրատայ կողմի ամրոցները. մնացին Հայք իրենք իրենց, Վահրամանուածք զըբսի մ'առաջնորդութեամբ, որոյ օգնական և խրախուսիչ էր Գրիգոր երէցն, Մատթէոսի պատմութեան շարունակողն. այլ երկու տարի մ'ետեւ (1140) ուրիշ Թուրք զօրավար մը Գարաւ-Արշան անուն, այն կողմերէն անցնելով և իմանալով որ բաւական պաշտպանող չունի Քեսուն, մնացողներն ալ իրմէ վախցեր փախեր են, 30 մարդ խաւրեց և այրել տուաւ քաղաքը դռներով և Մեծ Վասիլ շինած բարձրադարձ ապարանք, և Թողուց գնաց: Քանի մը տարի ալ այսպէս անստոյգ վիճակով քրիստոնէից ձեռք մնալէն ետեւ՝ Իկոնիոնի Սուլտանն Մասուտ տիրեց անոր և սահմանացը:

Շնորհալուոյն գրեթէ բովանդակ կենաց միջոց՝ այն կողմերն ուր ապրեցաւ և մերձաւոր սահմանքն, շարժման մեծ և անհաստատ վիճակի մէջ էին, վախով և յափշտակութեամբ չորս գլխաւոր աղբաց: Ասոնց առաջինն էր Յունաց ազգն, 'ի վաղուց բնիկ տէր, իբրեւ պայազատ արեւելեան ինքնակալութեան, որ արդէն սկսեր էր կողոպտուիլ և նուազիլ, նախ յԱրաբացուց, յետոյ 'ի Սելջուկեան Թուրքաց, որք զանազան ամիրաներ և սուլտաններ հաստատեր էին Միջագետաց, Ասորուց և Փ. Ասիոյ գաւառաց մէջ: Ասոնք էին երկրորդ և ամենէն ահարկու ազգն. ասոնց զօրաւոր տէրութիւնքն էին Իկոնիոնի (Ղօնիա) սուլտանն, Սեբաստիոյ և Կեսարիոյ Տանիշմէնի Հալպայ և Դամասկոսի սուլտանք կամ ամիրայք, և Հաշիշի աւազակք Լեւոնաբնակք, Անտիոքայ և Տրիպոլեայ իշխանութեանց միջոց: Երրորդ էին Լատինք, որք ժԱ զարու վերջին տարիները Ա. Խաչակրաց յաղթողական շահատակութեամբ՝ տիրեցին գաւառի Պաղեստինոյ՝ նաև Անտիոքայ, Եդեսիոյ, Տրիպոլեայ, Տիւրոսի¹, Սիդոնի, և այլն, և Եփրատայ արեւմտեան գաւառաց ընդ մէջ Հայոց և Ասորաց. և զանազան կոմսեր և բրինձեր (prince) հաստատեցին այն կողմերը, որք ոչ միայն ընդ Թուրքաց և Յունաց կռուէին, այլ և երբեմն իրարմէ խէնդ իրենց յանկարծագրեալ կալուածները:

Իսկ չորրորդ ազգն էր մեր Հայոց, որք յետ Յունաց և ըստ մասին հաւասար՝ այն կողմերու բնական ժողովուրդ եղեր էին. ոմանք ալ բռնական. վասն զի կամաւ և ախմայ գաղթելով 'ի Մեծ և յարեւելեան Հայաստանէ, նախ խաղաղութեամբ բնակեցան Ա. և Գ. անուանեալ Հայոց միջոց. յետոյ երբ Յոյնք սկսան թշնամեալ հաւատոյ խնդրոց պատճառաւ, և Թուրքք զօրանալ Մէլիք շահի աշխարհակալութեամբ, Հայք երկու կողմէն նեղուելով, ստիպուեցան զենքով իրենց ճամբայ բանալ, Փ. Ասիոյ հին հարաւային գաւառաց՝ Փոլիգիոյ, Իսաւրիոյ, Պամփիլիոյ և Կիւլիկիոյ ամրագոյն տեղերը ապաւինիլ, Տօրոսի և Անտիոքոսի կիրճերը և սարերը իրենց ապաստան ընտրել, նիզակաւ և աղեղամբ սահմանին անմերձեանալ ընել, և յետ այնորիկ քիչ քիչ բարձրերէն իջնել և Կիւլիկիոյ գեղեցիկ դաշտերուն մէջ ոտք դնելով մղել զՅոյնս, և տիրել նախ բերդից և ապա մեծ և անուանի քաղաքաց, Անարզաբայ, Մամեստիոյ և նոյն իսկ մայրաքաղաքին Տարսուսի, և միանգամայն լերանց, դաշտաց և ծովափանց: Սակայն այս բանին յաջորդութիւնն և հաստատուն ու կանոնաւոր տիրապետութիւն՝ հարկւրամեայ դարու ժամանակ մը պահանջեց 'ի Հայոց. շատ ջանք և ճարտարութիւն, երբեմն և խորամանկութիւն, մեծամեծ նեղութիւններ և աւելի մեծ քաջութիւններ. միով բանիւ, շատ արիւն իրենցմէ թափեցին, և ալ աւելի օտարներէ. մինչև որ կանգնեցաւ Ռուբինեանց քաջաժառանգ տէրութիւն և թագաւորութիւն: Ահա այս հարկւրութեանց բազմաշիւթ և բազմակիւ ժամանակին մէջ Շնորհալին ապրեցաւ, իբրեւ առաւար և կռուող երկրի մը մէջ արծաթափայլ վտակ մը սողակելով և սահելով, ժայռերէ և խոյրէն արգիլուելով, և ոչ առանց գժարութեան՝ այլ ինքն յինքեան միշտ հանգարտօրէն յառաջ երթալով:

Իր ատեն դեռ ձևացած չէր այդ Ռուբինեանց տէրութիւնն, թէ և որդի 'ի հօրէ չորս հինգ ազգ ապրազատեցին. այլ դեռ երկիրն՝ կալուած գըրուէր կայսերաց, և ասոնց առջև՝ Ռուբինի որդիքն բռնաւորք և յափշտակողք: Ասոնցմէ շատ ազնուական ցեղերէ Հայ իշխանք ալ այն կողմերու կամ ազատաբար տիրէին, ինչպէս շատ անգամ յիշեալ Գող Վասիլն, կամ իբրեւ Յունաց հպա-

¹ Այս վաճառաշահ անուանի քաղաքին տիրեցին խաչակիրք մեր պատմութեան այս հասած ժամանակներն (1124), յետ իբր վեցամեայ պաշարման. վերետեղեցիք 'ի ծովէ, մէկայլ դաշնակիցք և ասպետք 'ի ցամաքէ: Քաղաքացիք (որ օգնութեամբ Եդիպոսոսի և Կամասկոսի Սուլտանաց դէմ կը գնէին), պաշարողաց մեքենաները կայրէին և կը փշաջընէին. խաչակիրք կարօտացան զօրաւոր հնարքի և ճարտարութեան մը. հրաւեր խաւրեցին յԱնտիոք, Վեստիք անուամբ Հայ մեքենագիտի մը. որ եկաւ, այնպիսի մեքենաներ կանգնեց և ուղղեց, որ պաշարելոց զործիքները դարբեցուց, սովորականէ մեծ քարերով անոնց տունները սկսաւ կործանել. մէկ երկու օրէն անձնատուր եղան անոնք. իսկ խաչակիրք առատապէս վարձատրեցին զվարպետն Աւետիք:

տակ , ինչպէս մեր Պահլավունիքն , Նաթանալէէանք , և Հեթմանք՝ նախահարք Ս. Ներսիսի Լամբրոնացոյ , և այլք : Այս զանազանութիւնն , այսինքն ոմանց հպատակելն Յունաց և ոմանց ոչ աւելի ծանր և քննասիրելու Հայոց , քան օտարազգեաց յայտնի թշնամութիւնն . անոր համար ալ քանի մ'անգամ մեծապէս վտանգեցաւ նորին ծայ տէրութիւնն , և գրեթէ անհետանալու վերայ էր . թէ և հարազատքն Թորոս Ա և Լևոն Ա , իրենց անուանանիշ կենդանեաց ուժով և բարքով՝ այնքան աշխատեցան և արիացան՝ որ բռնած երկիրն իրենց անուամբ Լեւոնի էրիւր , Թորոսի էրիւր կոչուէր յայլազգեաց . այլ Յունաց կայսերութեան դեռ բազմագունդ զօրքերէն յօգնեցան և նեղեցան . ինքնին կայսերքն Յովհաննէս և Մանուէլ եկան անոնց դէմ . թէ և շատ հեղ յաղթեցին , բայց վերջապէս Լևոն Ա գերի ընկաւ ոմամբք իր որդւոց , և մեռաւ սրանեղութեամբ՝ իբրեւ առիւծ՝ ի գառազդի , ի Կ . Պօլս . որդին Թորոս Բ՝ Ճարտարութեամբ փախչելով ի բանտէն՝ նորէն տիրեց հօրն և հօրեղբօրը բռնած աեղերուն , և աւելի ալ ընդարձակեց սահմանները , ինչպէս յետոյ պիտի տեսնեմք :

Ուրիշ կողմէ ալ Թուրքաց ասպատակն և բռնակալութիւնք անգաղար նեղէին արեւելեան կողմերը . Եդեսիոյ , Մարաշու , Քեսնոյ , Կարկառայ , և ուրիշ Լատին և Հայ իշխանաց կալուածներուն յափշտակութիւնն՝ պատերազմօք և արիւնհեղութեամբք , մեր կաթողիկոսաց աթոռոց շատ մօտ և շատ ահարկու էին . անոր համար պատմական ստուգութիւն և ոչ զարգաբանութիւն պէտք է ընդունիլ ըսածնիս , թէ Շնորհալոյ բոլոր կեանքն՝ քաղաքական անստոյգ և անհանգարտ ժամանակի մը մէջ անցաւ . զոր և ինքն իսկ ազնիւ և հեզագին գանգատով կ'իմացընէ զանազան գրուածոց մէջ , ինչպէս ի յառաջաբանի Ընդհանրականին . « Յաղագս ժամանակիս չարութեան և բազմիշխանութեանն . և քաղաք թագաւորական և « բազմաժողով ոչ գոյ ազգի մերսմ » . իսկ իրեն համար կ'ըսուի . չունէր « և ոչ մի գեօղ և ոչ ան « դաստանս , և ոչ օգնութիւն ի թագաւորաց և իշխանաց » : Եւ այնպէս համաշխարհական մըրըկի և տաղնապի ատեն՝ երկու հարազատքն իրենց փոքրիկ Մովսէս գղեկին մէջ քաշուած՝ « աղօթէին առ « Տէր , կ'ըսէ պատմիչն , ապրեցուցանել զնոսա « ի չարութոյն այլասեռիցն և մարգարէմ քաղա « նացն . որ և փրկեալք լինէին և ապրեալք՝ որպէս « Զնձղուկ յորոգայթէ որսողաց . քանզի Տէր « ձեռնկալու էր նոցա , ըստ մարգարէին » :

Կը շարունակուի :

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես էրես 240.)

Գ Ա Լ Ի Լ Ի Ա .

Սիդոն , Սարեքդա , Տիշրոս
և Պողոսմայիս և Պելլա գետ :

ԺԳ .

Ելլեմք դարձեալ Գալիլիոյ հիւսիսային ծայրը , և ընդ մէջ Պաղեստինու և Ասորեստանի սահմանաց կը հանդիպիմք երկք քաղաքաց , Սիդոնի , Սարեքդայ և Տիշրոսի , համբաւաւորք ի Ս . Գիրս , համբաւաւորք և ի ժամանակս խաչակրաց :

Այս քաղաքներն որոց պատմութիւնն պիտի ընեմք , թէպէտ հրէական չեն , բայց նոյն ժողովրդեան տարեգրաց մէջ այնպիսի մեծ միջոց մը կը գրաւեն , որ կրնան կերպով մը նուիրական երկրին մաս համարուիլ : Ահա երեք քաղաքք կառուցեալք յափունս Միջերկրականի . զորս կոխեցին Մարիամն որդւոյն աստուածային ոտքերը . երեք քաղաքք ճոխացեալք նաւազնաց վաճառականութեամբ . հռչակաւորք իրենց գոյնագոյն երանգներովը և ճարտարութեամբ . բայց և երեքեան իսկ զոհ երկնային ցասման և վրէժխնդրութեան . որ իրենց աւերակներովն կ'ուսուցանեն աշխարհի մինչև ցայսօր , թէ ոչ մի ինչ կարէ ընդդէմ կալ աստուածային կամաց :

Սիդոն իր անունը իր հիմնադրէն առած է , որ էր անդրանիկ որդին Քանանու , և կառուցեալ է ի վերջին հիւսիսային ծայրս երկրին աւետեաց : — Մովսէսի ժամանակ էր մայր ամենայն քաղաքաց փրկիկեցուց , որոց իշխանութիւնը կը տարածէր յելլութեք գետոյ մինչև ցլեառն Կարմելոս , և ապա մինչև ցԳաղա : Սիդոնացիք այն ժամա-